# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը մայիսի 2014թ.*

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

## *N 1-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով ՀՀ ՊՆ 19.05.2014թ. ՊՆ 035/734 գրությունը՝ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում տեղաբաշխված ՊՆ-ի ռազմական ոստիկանության զորամասի ընդլայնման նպատակով ՀՀ Պաշտպանության նախարարությանն անհատույց մշտական օգտագործման իրավունքով հողամաս հատկացնելու մասին, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող, 410-006-01 ծածկագրից 2835քմ հողամասն /հատակագիծը կցվում է/ անհատույց մշտական օգտագործման իրավունքով Աշտարակ քաղաքի վարչական տարածքում տեղակայված ՊՆ-ի ռազմական ոստիկանության ընդլայնման համար ՀՀ Պաշտպանության նախարարությանը հատկացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ԱՎԱԳԱՆԻ՝

| *ԿՈՂՄ - 13* | *ԴԵՄ – 0* | *ՁԵՌՆՊԱՀ -1* |
|---|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱՋԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը մայիսի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶԱՏԱՐԻ ՀԱՏՎԱԾՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ <ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ> ՓԲԸ-ԻՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

## *N 2-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Աշտարակ քաղաքի Աբովյան փողոցի վերջնամասում կառուցված գազատարի շահագործումն իրականացնելու նպատակով, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/20 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքի հաշվեկշռում գտնվող 57մմ տրամագծով 160 գծամետր երկարության 966 960 ՀՀ դրամ արժեքով գազատարն անհատույց օգտագործման իրավունքով, շահագործման նպատակով հանձնել <Գազպրոմ Արմենիա> ՓԲԸ-ին և կնքել համապատասխան պայմանագիր:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕԿՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը մայիսի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 694-064 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

## *N 3-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ Արշակ Մելիքյանի սեփականությունը հանդիսացող Աշտարակ քաղաքի <Արայի> տեղամասում գտնվող 694-064 ծածկագրով 0.201հա գյուղատնտեսական այլ նշանակության հողամասի նպատակային նշանակությունը ավտոգազալցաճնշակայան կառուցելու համար բնակավայրերի նշանակության, հասարակական կառուցապատման փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման հավելվածի 49-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8/1 կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը և <Արայի տեղամասում գտնվող 694-064 ծածկագրով, քաղաքացի Արշակ Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական այլ նշանակության 0.201հա հողամասի նպատակային նշանակությունը ավտոգազալցաճնշակայան կառուցելու համար համարել փոփոխված որպես բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս:
2. Ի գիտություն ընդունել, որ փոփոխվող հողամասերի կադաստրային արժեքների տարբերությունը ենթակա է վճարման համայնքի բյուջե:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 13* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -1*

| | | |
|---|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը մայիսի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

## *N 4-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1], 66, 67-70, 76-80 հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1–ին մասի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի և գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքով օտարել և հաստատել մեկնարկային գին՝համաձայն հավելված 1-ի:
2. Համաձայնություն տալ կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրել հատուկ պահպանվող տարածքների հողերից և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -1*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 1*

Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | ՖՀԻ Գիտավան1 շենքի հարևան. | 801-001 | 24.7 | բնակ. | | բնակելի | 60 | |

*Հավելված 2*

Հողերի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | 1քմ - մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Քասախի կիրճ | 859-250 | 1353 | Հատուկ պահպանվող տարածքներ | | հանգստի գոտի | 100 | |
| 2 | հողատարածք | Քասախի կիրճ | 859-250 | 2598 | Հատուկ պահպանվող տարածքներ | | հանգստի գոտի | 100 | |
| 3 | հողատարածք | Մ. Խորենացու փողոց | 012-104 | 60 | բակ | | հասարա կական | 100 | |
| 4 | հողատարածք | Մ. Խորենացու փողոց | 012-104 | 25 | բակ | | բնակելի | 500 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*30-ը մայիսի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՂԲԱՎԱՅՐՈՒՄ ԱՂԲԸ ԹԱՂԵԼՈՒ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

***<u>N 5-Ն ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Ղեկավարվելով <Աղբահանության և սանիտարական մաքրման մասին> ՀՀ օրենքի 7, 12 և <Թափոնների մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել Աշտարակի քաղաքային աղբավայրում օպերատորի կողմից մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վտանգավոր ներգործությունը բացառող տեխնոլոգիական ցիկլով կենցաղային աղբը թաղելու վճար.

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետրի համար 1000 ՀՀ դրամ
- ըստ զանգվածի՝ մեկ տոննայի համար 4000 ՀՀ դրամ

<u>ԱՎԱԳԱՆԻ՝</u>

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը մայիսի 2014թ.*

ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

## *N 6-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով Աշտարակ քաղաքի բնակիչ, ՀՀ Ազգային անվտանգության մարմինների զինծառայող Հայկ Մելսիկի Գրիգորյանի դիմումը՝ որպես բնակարանային պայմանների կարիքավոր, իր ընտանիքի անդամների համար բնակելի տուն կառուցելու նպատակով հողամաս հատկացնելու մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա իր ընտանիքի 5 անդամներով համատեղ բնակվում է կնոջ ծնողների հետ միասին՝ նրանց պատկանող 2 սենյականոց բնակարանում, ինչպես նաև այն փաստը, որ չորս տարեկան որդին հանդիսանում է հաշմանդամ և զուրկ է խոսելու և քայլելու ունակություններից, տան միակ աշխատող ձեռքը ինքն է հանդիսանում, ղեկավարվելով ՀՀ <Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության մասին> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի, ՀՀ Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, 20-րդ կետի պահանջներով, համայնք ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Աշտարակ քաղաքի <Արա-1> թաղամասում գտնվող 147-002 ծածկագրից /ըստ որոշմանը կից հատակագծի/ 600քմ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը նվիրաբերելու Հայկ Մելսիկի Գրիգորյանին՝ բնակելի տուն կառուցելու համար, պայմանով, որ մինչև 2016թ. հունվարի 1-ը բնակելի տան շինարարությունը չսկսելու դեպքում հողամասը հետ է վերադարձվում համայնքին, իսկ շինարարության ավարտից հետո մինչև բոլոր երեխաների չափահաս դառնալը՝ 2028թ. բնակելի տունը և հողամասը ենթակա չեն օտարման:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*30-ը մայիսի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

## *N 7-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Համայնքի վարչական տարածքում բնակչության կողմից իրականացվող գյուղատնտեսական աշխատանքներին աջակցելու, գյուղատնտեսական մշակաբույսերն ու աճեցված բերքը բնական աղետներից պաշտպանելու նպատակով, հաշվի առնելով գյուղ. գործունեությամբ զբաղվող քաղաքի ազգաբնակչության խնդրանքը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքի <Արայի> տարածքում հիմնված են շուրջ 150հա խնձորի ինտենսիվ այգիներ, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի <Արայի> տարածքում գտնվող խնձորի ինտենսիվ այգիների պաշտպանության նպատակով հակակարկտային ակուստիկական, հեռակառավարվող կայան ձեռք բերելու և տեղադրելու համար 4.8 մլն դրամ տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Համայնքի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 14* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*«30» Մայիսի 2014թ.*

# ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԹԻՎ 8-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2014թ-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասը արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34/4 հոդվածների պահանջներով համայնքի ավագանին*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին),համաձայն հատված 4-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին ՝ համաձայն հատված 5-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
  ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

/հազ.դրամ/

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 429514,9 | 25000,0 | 429514,9 |
| Ծախսային մաս | 429514,9 | 48511,4 | 453026,3 |
| Դեֆիցիտ | ------ | -23511,4 | -23511.4 |
| Պահուստային ֆոնդ | 25000,0 | | |

Ա Վ Ա Գ Ա Ն Ի

*ԿՈՂՄ-14* *ԴԵՄ-0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը մայիսի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

## *N 9-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/19, 60, <Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին> ՀՀ օրենքի 9/2, 17 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի համատիրություններում չընդգրկված բազմաբնակարան շենքերի սպասարկման համար վճարը սահմանել 1քմ-ի համար ամսական 20 /քսան/ ՀՀ դրամ:
2. Բազմաբնակարան շենքերի սպասարկման և վճարների գանձման իրավասությունը դնել <Բարեկարգում> ՀՈԱԿ-ի վրա:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 11* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը մայիսի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆՈՒՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

## *N 10-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/5 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ քաղաքի Շինարարների 14 հասցեի բնակիչ Նունե Հովակիմյանի 20,05,2014թ. Հմ 439 դիմումն այն մասին, որ ՀՀ Առաջին տիկին Ռիտա Սարգսյանի աջակցությամբ «ԲԻԱՅՆԱ» սոցիալ-մշակութային բարեգործական հիմնադրամի կողմից իր առանձնահատուկ խնամքի կարիք ունեցող անչափահաս աղջկան՝ Շուշանիկ Հովակիմյանին նվիրաբերվել է ք.Աշտարակ, Տիգրան Մեծի 5/2 հասցեում գտնվող, 67,2 քմ մակերեսով բնակարան, որը կարիք ունի կահավորման և վերանորոգման, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Նունե Հովակիմյանին տրամադրել միանվագ օգնություն՝ 1000000 /մեկ միլիոն/ դրամի չափով՝ ՀՀ Առաջին տիկին Ռիտա Սարգսյանի աջակցությամբ «ԲԻԱՅՆԱ» սոցիալ-մշակութային բարեգործական հիմնադրամի կողմից առանձնահատուկ խնամքի կարիք ունեցող անչափահաս՝ Շուշանիկ Հովակիմյանին նվիրաբերած, ք.Աշտարակ, Տիգրան Մեծի 5/2 հասցեում գտնվող, 67,2 քմ մակերեսով բնակարանի կահավորման և վերանորոգման համար:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 13* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*30-ը մայիսի 2014թ.*

<ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N1-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ/*

## *N 11-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Հիմք ընդունելով զոհված զինծառայող Վարդան Ռոբերտի Օհանյանի մայր Նվարդ Հովհաննեսի Վարդումյանի դիմումը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Զոհված զինծառայող Վարդան Ռոբերտի Օհանյանի մայր՝ Ա. Մանուկյան 27/17 հասցեի բնակչուհի Նվարդ Հովհաննեսի Վարդումյանի անունը մտցնել ամենամսյա դրամական օգնություն ստացողների ցուցակի մեջ, յուրաքանչյուր ամիս նրան վճարելով 15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 13* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԹՈՎՄԱՍ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն